ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

№ 12

ՏԱՐԵԿԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

Թաւրիզում	14 ղրան
Գաւառներում	20 ղրան

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Ռուսաստան	4 րր. 50 կ
Թուրքիա	50 ղրուշ
Եւրոպա	12 ֆրանկ
Ամերիկա	2 տօլար 50ս.

Յայտարարութիւնների վճարը

Առաջին երեսում տողատեղը 5 շահի

Չորրորդ « » 3 »

ՍՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 6 շահի

Խմբագրութեան հասցէն՝ Թաւրիզ
«ՄԻՏՔ»-ի խմբագրութիւն կամ Tauris (Perse)
Rédaction du journal «MITK»

ՄԻՏՔ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Մեզ ղրողներից խնդրւում է գրեն պարզ, մաքուր և անպայման թղթի առաջին երեսի վրայ:

2. Խմբագրութիւնս իրեն է վերապահում իրաւունք՝ ստացուած յօդուածները փոփոխութեամբ և կրճատումներով հրատարակելու:

3. Մենք միրժում ենք ,,ու"-ի և ,,վ"-ի ուղղագրական հերձուածը և մեզ ենք վերապահում իրաւունք՝ ստացուած նիւթերը տպել մեր ընդունած ուղղագրութեամբ—ու—ով:

4. Չտպուած կարճ յօդուածները չեն վերադարձնւում: Ուղարկուած և չտպուած երկար նիւթերը յետ ստանալու համար պէտք է ուղարկել պօստի ծախսը:

5. Չի տպուի ոչ մի յօդուած եթէ գա կեղծ անուան հետ միաժամանակ չի կրի յօդուածագրի իսկական անուն ազգանունը:

6. Բաժանորդները թերթ չստանալու դէպքում շուտով տեղեկացնելու են մեզ, հակառակ դէպքում խմբագրութիւնս իրեն զերծ է համարում պատասխանատուութիւնից:

7. Չտպուած յօդուածների համար խմբագրութիւնս բացատրութիւններ չի տալիս:

8. Հասցէները փոխելու համար պէտք մեզ ուղարկել 2 ղրան 10 շահի:

№ 12 1912 Թ. ՇԱԲԱԹ 12 ՄԱՅԻՍ 1912 Թ. № 12

ԵՓՐԵՄՆ ԸՆԿԱԾ

ՀԵՐՈՍԻ ՄԱՀԸ

Ամսոյս 7-ի առաւօտեան լուր ստացուեց որ Եփրեմի ընդդէմ Սալար-Դովլէի կռուող զօրամասը պարտութիւն է կրել: 8-ի առաւօտեան յայտնուեց, որ արդէն զարկուել է Եփրեմը. Մանրամասնութիւններ պակասում են: Կասկածւում է դաւաճանութեան մասին. Յամենայն դէպս դառն փաստ է, որ կռուի դաշտում Լէոնիդասեան մահով ընկել է պատերազմագէտի հռչակ հանած Եփրեմը:

Կայ մահ, որ կեանք է: Կայ պարտութիւն, որ յաղթութիւն է. Այդ առաւելութեամբ և անմահութեան պսակով է ընկել Եփրեմը.

Եփրեմի մահուա՛ն խիստ սարդացող Պարսկաստանը կորցրեց իր լաւագոյն մարտիկին, որին արժանաւոր փոխարինող դեռ չենք կարծում տայ մեր Պարսկաստանը մօտիկ ապագայում:

Եթէ Պապի թագաւորութեան պարծանք և նեցուկ՝ քաջարանց Մուշեղը իր վեհանձնութեամբ ստիպել էր Շապուհին, որ վերջինս նորա պատկերը նկարել տալով իր գինու բաժակի վրայ, ամեն անգամ առաջին գաւաթը պարպում էր «ի կենաց ճերմակաձիոյն», ապա անշուշտ ապագայ Պարսկաստանի անաչառ պատմագիրը իր երկի առաջին և լաւագոյն էջերը կըգեղազարդէ Պարսկաստանի ազատագրութեան անվկանդ և անձնուրաց մարտիկ Եփրեմի անունով, որ ընկաւ հերոսի մահուամբ պարտականութեան դաշտում:

Խորը կսկիծ և խոնարհ յարգանք հերոսի թարմ աճիւնին:

Ա. Տ. Վ.

9 Մայիս 1912 թ.
Թաւրիզ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Այսօր հրատարակուեց Նաիբ Սալթանայի[1] հրամանագիրը նոր Մէջլիսի ընտրութիւնների համար, ուղղուած նախարարներին: Երկրի ներկայ աագնապալի վիճակում յիշեալ հրամանագրի երեւումը, մանաւանդ իր երկդիմի ու խորհրդաւոր ակնարկներով, շատ կարեւոր գաղտնիքներ է բացում ուշիմ հետաքրքրուողների առաջ, առաւել եւս երբ նկատի է առնւում այն հանգամանքը, որ այսօր պետական գանձարանի (Նաւտերի հեռանալուց յետոյ) դատարկութեան պատճառով՝ ընկավորաց մարմնի կողմից նոր փոխառութեան առաջարկներ են լինում մեկ կողմից, իսկ Անգլօ-Ռուսական հսկողութեամբ կազմուելիք 30000 նոց բանակի հսկայական ծախքերի ստրուականն է հրապարակ գալում միւս կողմից...

Հրամանագիրն ինքեան մի փառաւոր խոստովանութիւն է Նաիբ Սալթանի կողմից, որ նա անում է հրապարակաւ յայտարարելու համար, ա.) որ երկիրը կաշկանդուած է և ձայնի ու խօսքի ազատութիւն չկայ և բ. թէ կարիքից մղուած է որ երկրի «յոպիոր կաշկանդուած, անապահով ու ձայնի և խօսքի չղթայուած վիճակում առաջարկում է նախարարներին մեկ կամ միւս ձեւով կ տարել մէջլիսի նոր ընտրութիւնները, նախ քան իր՝ Նաիբ Սալթանայի մեկնումը դէպ Եւրոպա:

Այս աոթիւ և մտքերի լուսաբանութեան համար՝ այստեղ առաջ կը բերենք յիշեալ հրամանագրի հետեւեալ տողերը

«...Մանաւանդ լսելով որ ոմանք տըգիտութիւնից և ոմանք էլ նախանձից ու հակառակութեան ոգուց մղուած՝ ընտրութիւնների յետաձգումն ու անհոգութիւնը պետական կազմին են վերագրում, հետեւաբար նախարարական կազմի յուրջ ուշադրութիւնը հրաւիրելով այս կէտի վրայ, հրահանգում ենք նրան լուրջ քննութեան ենթարկելով այս հարցը՝ գէթ այնտեղերում ուր ընտրութիւնների համար դեռ խօսքի ու ձայնի ազատութիւն է տիրում, մանաւանդ Թէհրանում, որը համեմատաբար աւելի կարեւոր տեղ է գրաւում քան երկրի միւս տեղերը, մի ժամ առաջ ձեռնարկել նոր ընտրութեան կարեւոր գործին...»:

Դժուար չի հասկանալ թէ ինչու համար է այսպէս աճապարանքով ձեռնարկւում Մէջլիսի նոր ընտրութեանը մինչդեռ երկրի մեկ ծայրից մինչեւ միւսը տիրում է ձայնի անապահովութիւն և քուէի բռնաբարում, ինչպէս Նաիբ-Սալթանէն է խոստովանում:

Նաւտերի վերակազմած եկամտային ապահովեցնող ձեւը, իր մեկնելուց յետոյ շարունակող չունեցաւ և նորէն բոլորովին տակն ու վրայ լինելով, երեւան գրուեց երկրի սնանկութիւնը մինչդեռ հէնց այդ սնանկութեան հանդէպ նիւթական ահագին պահանջ կայ 30000-նոց բանակի կազմակերպութեան, Քիրմանշահի ու Համադանի շուրջը ծագած հսկայական ապստամբութիւնը ճընշելու և ցեխավարների պահանջը գոհացնելու համար: Սրանք անհրաժեշտ պահանջներ են որոնք երեւան են գրւում երկրի խնամակալի դերն ստանձնած դրացիների կողմից և որոնց իրականացման համար այսպիսի մի «սահմանադրական» երկրում... պէտք է ունենալ ժողովրդի ձայնը, նորա քուէն և համաձայնութիւնը: Ու... Խնամակալ Նաիբ Սալթանի կողմից հրամանագրւում է նոր ընտրութիւններին ձեռնարկել, մինչդեռ ինքն էլ միեւնոյն ժամանակ յայտարարում է թէ այդ ընտրութեան համար երկրի մէջ բացի Թէհրանից և ոչ մի տեղ չկայ ձայնի և քուէի ազատութիւն, բայց ինչ էլ որ լինի երկրի վիճակի հետ խաղացողների շահերն է պահանջում այդպիսի ընտրութիւնը, որովհետև փոխառութեան և փոխառութեան անխուսափելի պէտքը կայ մի խումբ արտաքին և ներքին «դիւանագէտների» կողմից..

Նաիբ Սալթանէի նպատակն է Մէջլիսի ընտրութիւնը և վերաբացումը, ինչ պայմանների ներքոյ և ինչ ձեւով էլ որ լինի, եթէ նոյնիսկ այդ ընտրութեանը մասնակցել չկարողանան երկրի այն բոլոր մասերը, ուր չկայ ձայնի և քուէի ազատութիւն, որ նշանակում է Մէջլիսը պիտի ընտրուի Թէհրանի քուէով: Միայն թէ այդ մէջլիսը ցոյց տայ իր գոյութիւնը, նման այն մահամերձ անգլիացուն, որ իր որդուն հետեւեալ կտակն էր անում Make money honest if you can, but make money... (փող հաւաքէ պարկեշտութեամբ, եթէ կարող ես, բայց.. փող հաւաքէ...):

Ասել է թէ գժբախտ Իրանի մէջլիսը պիտի ընտրուի ձայների մեծամասնութեամբ՝ եթէ կարելի է, բայց և այնպէս նա պիտի վերաբացուի որովհետև այդպէս է պահանջում մի խումբ տկոստանուներ կողմից.. :

Ինչ էլ որ լինի վերաբացուելիք մէջլիսի ճակատագիրը և նորա կատարելիք դերը ապագայում, բայց և այնպէս այդ բոլոր մութ ու խորհրդաւոր երեւոյթների մէջ միակ լուսատու աստղը, մխիթարական երեւոյթը որ աչքի է զարկում, այն է որ հայերիս ներկայացուցիչը, յանձին յուխտենականապէս պայմանաւորուած պատգամաւոր Յովսէփ Միրզայեանցի, այժմեանից իսկ թիկունքը տուած իր պատգամաւորական փափուկ բազմոցին՝ սպասում է իր կոլլեգների համախմբումին:

Անտար չէ որ հայերս ամեն բանի մէջ առաջին տեղն ենք գրաւում: Սորան ապացոյց՝ անցեալ օրերս Թէհրանում երեւաց Հ. Յ. Դ. տեղական մարմնի մի թռուցիկը, որով նա պահանջում է մէջլիսի վերաբացումը ??!!., իսկ դորան ի պատասխան երեւան եկաւ մի այլ պարսկերէն թռուցիկ, որով բացարձակապէս մերժւում և նոյն իսկ դատապարտւում է Հ. Յ. Դ. մասնակցութիւնը Պարսկաստանի քաղաքական կեանքի մէջ, «որը մինչեւ այսօր աւելի քան աղէտաբեր է եղել այս երկրի համար»: Մանաւանդ յարձակւում է և նոյն իսկ անուանարկւում է այդ կուսակցութեան տեղիս կոմիտէի լիգը X. X.ին որոշ յանցքների համար: Փսփսուք կայ որ այս հակադիր թռուցիկները Հ. Յ. Դ. տեղիս պառակտուած երկու խմբերի, այն է կոմիտէի և Եփրեմականների կողմից են երեւան գրուել միմեանց անուանարկելու նպատակով: Թէհրան Սատուրն

ՏԱՃԿԱՀԱՅ ԿԵԱՆՔ

Հնչակեան և Դաշնակցական կուսակցութիւնները Տաճկահայ իրականութեան մէջ.

—

Վերոյիշեալ կուսակցութիւնները ծը նունդ էին բացառապէս Տաճկահայերի անծայր կեղեքման, անլուր բռնադատութեան և հակամարդկային երկնաբուղխ հարուածների, որ անխնայօրէն թափւում էին պետական հաւատալութեամբ միայն մեղաւոր անբաղդ այդ հայերի գլխին:

Նշանակւում է այդ կուսակցութիւնների ամբողջական ու մայրական պատրաստութիւնները ուղղուած էին միայն և սկզբնապէս տաճիկ բռնակալութեան դէմ, որի մարմնացումն էր «կարմիր» տիտղոսով փոմահացած Սուլթան Աբդուլ Համիդը—ժամանակակից տաճիկ Ներոնը:

Իրենց գործունէութեան յայտնի նըպատակն ու բաղձանքն ունենալով՝ այդ կուսակցութիւնները նախնական շրջանում, գրեթէ, ազատ կացութիւն ունէին Ռուսական կայսրութեան սահմաններում, իսկ լիակատար ազատութիւն՝ Պարսկաստանում. ուր հայերի դրութիւնը միշտ[1] առանձնապէս նախանձելի և արտօնեալ է եղել

* Անունը մենք ենք կրճատում:

Ծ. Խ.

[1] Ղաճարների օրով, մանաւանդ Նասրեդդին-Շահի օրերից սկսեալ:

Մ. Հ.

[1] Խնամակալի Ծ. Խ.

Սակայն վերջին մի քանի տարիներում քաղաքական հանգամանքներն այնպէս հակադարձ փոփոխութիւնների ենթարկուեցան, որ այդ կուսակցութիւններին ոչ միայն գործունէութիւնը, այլ և նոցա գոյութիւնն անգամ անհնար և անհանդուրժելի կացուցին մանաւանդ Իւսսաց կայսրութեան սահմաններում և վերջերս էլ՝ Պարսկաստանում։

Այս հասկանալի պատճառներով այդ կուսակցութիւնները միանգամայն լետ մղուեցան, ապատան, հիւրընկալութիւն և ազատութիւն գտան արդէն սահմանադրական դարձած այն Տաճկաստանում, ուր կուսակցականները երբեմն որսուում էին ամենայն խստասրտութեամբ և պատժուում կախաղաններով։

Միջանկեալ այսքան ասենք, որ դիւանագիտութիւնը յաճախ է այդպէս անակնկալ փոփոխութիւններ մացնում ազգերի և պետութեանց կեանքում։ Անցնենք։

Տաճկաստանի սահմանադրական դառնալուց լետոյ, թէ այդ կուսակցութիւնները որպիսի գրկաբաց և սիրալիր ընդունելութիւն գտան Տաճկահայերի կողմից և և թէ դրանցից մէկը որպիսի խակ, հակաընկերվարական և հակաժողովրդական «բաց ու գոցի» անհարկի հարցով երկար ալեկոծեց ամբոխը կապերով դարևոր անցեալի հետ զօդուած նահապետական Տաճկահայ ժողովրդին և այլն, չեն լինելու այս յօդուածում մեր քննադատութեան առարկան։

Այս յօդուածում մենք մեր ընթերցողներին պիտի ծանօթացնենք Հնչակեան և Դաշնակցական կուսակցութիւնների այն գործունէութեան հետ, որ նոքա ներևան բերին Օսմանեան պարլամենտական այս վերջին ընտրութիւնների ժամանակ, միանալով կամ բլոկ կազմելով այս ու այն տաճիկ քաղաքական կուսակցութեան հետ։

Եւ որովհետև մեր այդ կուսակցութիւնների կատարած ընտրութիւնները դրսում ընդունուում էին հայ ազգի անուամբ, ուրիշ խօսքով՝ այդ երկու կուսակցութիւններն իրենց՝ տաճիկ կառավարութեան և տաճիկ կուսակցութեանց առաջ ներկայացնում էին իբրև հայ ազգութեան ներկայացուցչութիւն, ուստի հարկ է և ծանօթանալ, թէ որչափով նոցա (այդ հայ կուսակցութիւնների) ընտրական արարքն ու բլոկը օգտակար էին Տաճկահայերին, կամ՝ համապատասխան վերջիններիս շահին, դիրքին և անուան։

Այս վերջին կէտը լաւ ըմբռնելու համար պէտք է մօտիկից ծանօթանալ ծրագրին, քաղաքական գաւանութեանց այն տաճիկ կուսակցութեանց, որոնց հետ համերաշխել էին մերազգի կուսակցութիւնները։

Այդ կտեսնենք յաջորդիւ։

(Կը շարունակուի)

Ա. Տ. Վ.

ԱՆՀԵՌԱՏԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՕԳՏՕՎՆՕՍ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Մեր թերթի երկու նախորդ համարների Ազգային լուրերի բաժնում յայտնեցինք մեր ընթերցողներին, թէ Տաճկաստանում հայ կուսակցութիւնները ի՞նչ համերաշխութիւններ են կնքել տաճիկ կուսակցութեանց հետ։

Ստորև «Մշակ»ից[1]) քաղուած արարը ը նում ենք Պոլսից մի իրազեկ անձնաւորութեան գրուածքը այն մասին, թէ ի՞նչ դրութիւն է ստեղծուել Դաշնակցութեան համար Տաճկաստանում, ուր նա Օսմանեան պառլամենտական ընտրութեանց առթիւ՝ վատահանալով Իթթիհատին, դեկավարել է նրա հետ հայ ժողովրդի մէջ ընտրական գործը և վերջը դառնալով յուսախաբուել։

—

. .Նախ՝ իր միջոցներուն առաջինը եղաւ usախounրիւնը, թիւրքաց սովորական զէնքը։ Իթթիհատը խոստացաւ՝ առատ-առատ՝ ալբանացիին, հայուն, յունին, արաբին... միայն ընտրութեան շրջանին մէջ անոնց համերաշխութիւնը կամ կոյր հպատակութիւնը ապահովելու համար։

Զէ՛ մի որ թիւրքական համբաւաւորառակը կը լանձնարարէ «սատանային հետ բարեկամ ըլլալ մինչև կամուրջէն անցնելը»։

Եւ յաջողեցան խաբեր... դէթ պարզամիտ հայերը և անոնց ինքնակոչ տիմարամիտ առաջնորդները։

Իսկ քուէարկութիւնը կատարուեցաւ կատարելապէս անսովոր պայմաններու մէջ, որոնք ուրիշ բան չէին ցոյց տար, եթէ ոչ սահմանադրութեան չգոյութիւնը։

Բոլոր անոնք, որոնք տիմարութիւնը ունեցան քուէատուփերու մերձենալու, անպայման պարտաւորուեցան Իթթիհատին ցանկիրը նեակ քուէատուփ։ Այն անոր, որ անկէ դուրս ուրիշ բան մը քուէալ կելու փափագ ունեցաւ, կամ արգիլուեցաւ կամ ծեծուեցաւ։

Իթթիհատին ի նպաստ քուէարկելու քաջութիւնը ցոյց տուողներու քուէները խարդախուած են և եթէ ոեէ կերպով այդ խարդախութեան համար քուէարկուն բողոք բարձրացուցած է, անպայման ու անխիղճ ինքզինքը վտանգի ենթարկած է։

Քուէատուփերուն շուրջ սուիններու շողշողուն տեսքը և ոստիկանական խիստ հսկողութիւնը աւելի սարսափ ազդելու հանգամանք ունէին։

Իթթիհատական մեծամասնութիւն կազմելու համար մեռելներու մասնակցութիւնն ալ ապահոված են նուր-Օսմանէի վէգիրները, և ոչ մէկ յայտնի ապօրինութեան առջև կանգ չառնելով։

Գալով խարդախութեանց, անոնց հաշիւը գտնել շատ դժուար պիտի ըլլայ։ Զարհուրելի խարդախութիւններ գործադրուեցան, որոնք ընտրական պայքարի ձևին տակ ուղղակի ծնչումներ էին քաղաքացիներու ազատութեան դէմ։ Տեղատեղ մուխարներ տունէրէն տուգանքի ապառնալիքի տակ քաղաքացիներու ինքնութեան թուղթերը ժողոված և... փոխանորդաբար քուէ տուած են առանց քուէարկուներուն գիտութեանը։

Իրենց հայ զինակից, սօփայակիր ասպիսներն ալ, որ բոլոր սրբութեանց անունով կերդնուն, բոլոր վսեմ ու սուրբ իդէաներու անունովը կը գործեն, իբր ընտրական ամենանուիր պայքար մը, գործակցեցան իրենց «մեծ բարեկամներուն», այս զզուելի շահատակութեանցը և իրենք ալ ըրին՝ ինչ ոչ կրնային ընել—խաբէութիւն, ստութիւն, խարդախութիւն, կեղծիք, բռնութիւն, ճնշում—ապահովելու համար իրենց յաջողութիւնը, որ կախում ունէր Իթթիհատին յաջողութենէն։

Եւ տեսանք արդէն, թէ անոնք ոտնահարեցին ազգային ամենէն նուիրական իրաւունքները, անոնք չքացուցին պատիրիարքարանին բարոյական հեղինակութիւնը, անոնք խարեցին բոլոր միւս կուսակցութիւնները... համերաշխական ժողովի օրօրոցին մէջ քնացնելով զանոնք... իրենց համար մեծ յաջողութիւններ ապահովելու, Իթթիհատէն երեսփոխաններու խաղոր թիւ մը կորզելու և քանի մը շաբաթուցիչ խոստումներ ու թեթև արդիւնքներ ձեռք բերելու համար, յետոյ յոխորտելու համար, թէ... «տես մենք այսպէս թիւ՝ վատահանալով Իթթիհատին, դեկավարել է նրա հետ հայ ժողովրդի մէջ ընտրական գործը և վերջը դառնալով յուսախաբուել։

Սակայն «գողը գողէն գողացաւ, Աստուած տեսաւ զարմացաւ»։ Դաշնակցութիւնը հայ ազգը խաբեց, Իթթիհատը Դաշնակցութիւնը խաբեց... Իրաւ, ամէն մարդ տեսաւ զարմացաւ։

Իթթիհատը, որ խոստացեր էր Դաշնակցութեան շատ մը բաներ. - ա) Հոգալու հարցին լուծումը, բ) Հայաստանի բարենորոգումները, գ) 11-ի տեղ 20 ի չափ երեսփոխաններ - հիմա Ս. Զաւարեան կը յայտարարէ, թէ իր խոստումները կը դրժէ։ Այսօր իսկ «Ազատամարտի» մէջ Դաշնակցութեան այս սիւնը կը խոստովանէր, թէ այդ խոստումներուն ամենէն անմիջականը ու ամենէն շօշափելին երեսփոխանաց թուական յաւելումը պիտի ըլլար, որ հիմա կը տեսնուի ի հակառակէն կամ «բացասաբար» գործադրուած։

Եւ Զաւարեան՝ գուժկանը հանդիսանալով անշուշտ դաշնակցական հերոսներու մեծ յուսախարութեան և տաղտկը անոնց տիմարամիտ ազգայնութեան ու միամտութեան՝ կը պոռայ «Ազատամարտի» մէջ, թէ այս ընտրութիւնը բարոյական Ադանա մրն է առանց մարտ 31-ի արդարացման։

Ուրեմն Դաշնակցութիւնը կը խոստովանի, թէ խաբուած է։

Անսխալ Դաշնակցութիւնը... սխալական կը հոչակուի ուրեմն նոյն իսկ դաշնակցականաց բերնով... և հարկ կըլլայ խոստովանիլ, թէ գործաւորը շահելու համար բարոյական պոռնկացում մը մինչև հոն մխելու չէ, որ... ամէն բանի աչք գոցենք գործաւորին հետ, գործաւորին կողմը ըլլալու համար։

Սակայն մի՛ մոռնաք քամելիոններ—դուք՝ որ կը կոչուիք Զօհրապ, Խաժակ, Վռամեան—թէ դուք դեռ քանի մը օրեր առաջ Կ. Պոլսոյ բոլոր թաղերուն մէջ ձեր արիւնաշաղախ ձեռքը Ադանայի արիւնով ասկաւին յապտրդ չգանող մեծ ոճրագործներուն ու մարդասպաններուն երկարելու իբր միակ արդարացում՝ անոնց գործաւորը ըլլալը մէջտեղ կը նետէիք։

Եթէ գործաւորին ապաւինիլ խոհեմութեան գաղտ է, եթէ հոգորներ շղթել նուազագոյն չարիքն է, եթէ տիրոջին հետ ըլլալ՝ քան թէ անոր ընդդիմադիր՝ աւելի գիւանագիտական գործ է, ո՞ւր էր ձեր խելքը, ո՞վ դատաստանութեան առաքեալներ, երբ Համիդ էր այս երկրին մէջ միակ գործութիւնը, ալՖան ու օմեխան։ Այն ատեն ինչո՞ւ չունեցաք այն խոհականութիւնը, որ այսօր կը քարոզէք, որ այսօր իբր ճարպիկ, խոհական ու հանճարեղ գործ մը, մեր դէմը կանգնեցնել կուզէք։

Յանուն յեղափոխականութեան ուրեմն յեսս կոչումը կընէ ձեր յեղափոխական գործունէութեանը, որ այս վայրկեանէն սկսեալ այլևս կը դառնայ կըլլայ պատմութիւնը ազգային մեծ դատաստանութեան մը, որ 300000 կեանքեր արժած է, մէկ կողմ թողլով բարոյական և նիւթական վնասները։

Գործաւորին սարկամիտ խնկարկուներ ըսէք մեզի, թէ ինչո՞վ դուք կը տարբերիք հիմա բոլոր անոնցմէ, զորս երբեմն դուք դատաստան հոչակած էիք, պարզապէս անոր համար, որ անոնք գործաւորին հետ ըլլալ աւելի նախապատիւ համարած էին, քան թէ անոր դէմ։

Ի՞նչ կատակերգութիւն, Աստուած իմ, և և դերերու ի՞նչ հոկայ փոփոխութիւն։

Երբեմնի էֆէնդիներու դասակարգին կը յաջորդէ ուրեմն այսօր դաշնակցական էֆէնդիներու դասակարգը, որ Նուրի-Օսմանիէի *) Բ. Դրան սարուկն է ու աչքը մեր ազգային ներքին գործերու մէջ, ինչպէս էր երբեմնի միւսը՝ Բաբը-Ալիի Բ. Դրան։

Շառայլ

ՄՆԱՑԻՆՔ ՉՀԱՍԿԱՑՈՒԱԾ

Մամուլը կերու պարտականութիւն ունի անկաշկանդ արտայայտուելու։ Միաւելորդ կրկնութիւն է նորէն այստեղ ասել, որ մամուլը համարուում է 7-րդ մեծ պետութիւն։

Ոչ միայն կանցլերները, մինիստրներ, իշխաններ ու թագաւորներ, այլ և զօրեղ կայսրներ անգամ կերած չեն մամուլի քննադատութիւնից և նրա թելադրութիւններից։

Բաւական է յիշել միայն Եւրոպայի հեգեմոնիան իր ձեռքում պահող Վիլհելմի անցեալներում ասած մի ցնցիչ ճառը և Գերմանական մամուլի միաձայնութեամբ արշաւն ու քննադատութիւնը այդ ճառի դէմ։ Գերմանական մամուլը խստապէս հրաւիրեց մինիստր նախագահին չափ դնել կայսեր խօսածին և երաշխաւորել՝ որ չկրկնուէին նման դէպքեր։

Եւ անդրդուելի Քայզրը ոչ մի մամուլի դեկավարի ոչինչ չասաց...

Մենք մեր թերթի նախորդ համարում—լուրերի բաժնում — Քէյվանցոց, հանգստարանի, Ուրմիոյ շրջանի ուսուցիչների և այրի Թագագիւլի մասին տեղեկութիւններ էինք տուել և յայտնել, որ թեմական իշխանութիւնը հարկ եղած չափով ուշադիր ու արթուն չէ դէպի դարմանումն պահանջող հասարակական կարիքները։

Լուրերը մենք նախապէս իմացել և ստուգել էինք գործից տեղեակ և վրս տահելի անձանցից։

Եւ սակայն մեր այդ դերի ու պարտականութեան և սրտացաւ թելադրութեան պատճառով, մենք հանդիպել ու արժանացել ենք մեր սրբազան հօր ցասման, վրդովման և ...։)

Մենք ցաւում ենք, որ մնացել ենք չհասկացուած։ Եւ չհասկացուելը մարդու ամենամեծ դժբաղդութիւնն է։

Մենք սրբազանին շատ մօտ կանգնած և նրան ջերմ պաշտպանողներից մէկն ենք եղել։

Մենք իբրև նորա նախկին սանը, կամենում ենք նորան տեսնել նախանձելի զիրքի օրինակելի անուան և կեն դանի գործունէութեան մէջ։

Մենք ի փառաւորումն (ըստ մեր կարեաց և կարծեաց) մեր այդ պատկառելի ուսուցչի, շատ անգամներ, միշտ հետ նաև այլ հեղինակաւոր անձինք, խնդրել ու առաջարկել ենք ժամանակակից հրատապ հարցերի մասին հնչեցնել իր ազգու և հրապարակում յարգուած ձայնը մամուլով, ստեղծէ մի զուժեղ և անդիմադրելի վարչական կազմ իր շրջապատում։ Այդ առթիւ և այդ ուղղութեամբ էլ մենք գրեցինք «Միտքի Պ և Ա համարներում ժամանակակից երկու խմբագրականներ. «Ուժեղ իշխանութեան կարիքը» վերնագրով. սակայն մենք արձագանք չգտանք և թեմում շատ բան մնաց թերի։

Գերմանական համալսարանի կրթութեամբ արժանապէս հոխացած այդ հո

կոչուի։ Այս թաղամասին մէջ է Իթթիհատի կեդրոնական վարչութիւնը, որն աւելի գործունեայ կայան մըն է, քան բուն իսկ պաշտօնական Բ. Դուռը, որ կը գտնուի քիչ անդին Բաբը-Ալիի պողոտային վրայ։

[1]) Բաղդակիրթ աշխարհում ընդունուած ձևով, նման դէպքերում կտան հերքում։ Եթէ սրբազան հայրը այդ չնորհը չի ուզում անել, խնդրում ենք պատ. թեմ. խորհրդին հերքել այդ լուրերը, եթէ անհիմն են։

[1]) «Մշակ № 86

[1]) Նուրի-Օսմանէին Կ. Պոլսոյ մզկիթներէն մէկն է, որուն շրջակայքը իր անուամբ կը

յակապ միտքը Գերմանական գիտական աշխարհում մեծ անուն վաստակած այդ եղակի դէմքը, ըստ մեր ակնկալութեան, իր հուժկու գրիչն ու ձայնը պէտք է բարձրացնէ մեր կործանուող դպրոցների ու եկեղեցոյ, այլասերուած, անկրօն, դիցից հեռացած, դէպի ամէն իղձալի և ամէն սրբութիւն անտարբեր դարձած հայ ժողովրդի արթնացման և բարձրացման յաւէտ վսեմ գործի համար։

Մեր ազգը և յատկապէս մոր իւաւար թեմը այդ մտաւոր ու հոգեկան կարգինալ ծառայութեան պէտք ունի և մեր միշտ յարգելի սրբազան ուսուցչի այդ գործունէութիւնն է միայն, որ մեզ լոյս և կենդանութիւն կտայ։[1]

Մենք պահանջում ենք ուժեղ իշխանութիւն և ուժեղ կառավարող ձեռք և եթէ ըստ մեր ասածի ու ակնկալածի լինէր՝ ապա Մայիս 8-ի դասադուլները չէին լինի ինքնագլուխ և անհրաժեշտ՝ և Սրամեան դպրոցի շուրջը, այնքան մօտիկ առաջնորդարանին չէին կատարուի անանուն ցոյցեր ի խանգարումն մեր դասերի։

Հիմնելով աւելի երկարել, այսքանը կասենք, որ մեր սրտացաւութիւնը դէպի հասարակական խնդիրները, և, որ գլխաւորն է, մեր նախանձախնդրութիւնը դէպի առաջնորդ հօր բացառիկ հեղինակութիւնը, մեզ դրդել էին, սրպէս մամուլի մի համեստ դեկավար, անել յիշեալ թելադրութիւնը։

Մեր մթնոլորտը այնքան է վարակուած փարիսեցիութեան թոյնով, որ ատում ու թշնամանում է սրտացաւը, ճշմարտախօսը, և փայփայում է լուռն ու լռութեան քաղաքականութեան հետևողը։

Յարգոյ ուսուցիչ, կշեռչն, թերևս, նորէն չարախօսութեան մրրիկները և այդ ժամանակ էլի մեզ միայն կտեսնէք ձեր կողքին, որպէս անցելում, և ոչ նոցա, որք... շուրջ գձեօք են և, թերևս, «բարեկամք»։

Վերջացնենք, ըստ Ալչբսպիրի ասելով.

—Անիծեալ ժամանակներ, երբ սէրը, նախանձախնդրութիւնն ու ճշմարտախօսութիւնը չեն գնահատում, այլ յանցանքներ են համարում։

Ա. Տ. Վ.

[1] Մեզ ինչ պէտք են Բրազիլիոյ թուանաւոր օձերն ու «նեպենթոս» բոյսերը... Ծ. Հ.

ԳԻՏՈՒԹԻՒՆ

Incubator

(Ինքիւբէյթըր)

Ինքնաթռուխս մեքենայ

Մեզանում սովորական մի բան է դարձել, որ երբ ուրիշ ոչ մի գործ չի կարելի ճարել՝ իսկոյն և եթ գինետուն են բաց անում և վերջերումս էլ ուրիշ... տներ բացուեցին, որոնց դռները յաւիտենս յաւիտենից ցանկալի էր որ գոց մնային, գոնէ հայաբնակ թաղերում։ Բայց փոխուել են ժամանակները, վերացուել է արդէն առ, նամուս ինչպէս որ ասում են, և այժմ ամէն բան թոյլատրելի է, բաւական է որ մարդ կարողանայ փող շահել և այդ էլ հնարաւոր եղածին չափ առատօրէն, իսկ պատիւ, բարոյականութիւն առաքինութիւն և այլն և այլն — այդպէս բաներ չկան իրական կեանքում, դրանք վերացական, այսպէս ասած, փիլիսոփայական խօսքերն են և գեղեցիկ, որոնց միայն բառարաններում պէտք է որոնել կամ շատ շատ տարին մի անգամ Աւագ շաբաթուայ քարոզների առթիւ լսել։ Կեցցէ ուրեմն այս կերպի առաջդիմութիւնը։

Մի բան սակայն ստոյգ է և անժխտելի, որ մարդիկ պէտք է ապրեն, ուստի և մի որևէ գործ անելու են։ Ինչու չանել սակայն այստուրար գործել։ Որովհետև «Միաք» շաբաթաթերթը ձգտում է ոգի ի բուն աշխատել հայ ժողովուրդի բարոյութեան և բարելաւութեանը, որը նիւթապէս և բարոյապէս պէտք է լինի միանգամայն, ուստի թող թոյլ տուի մեզ ուշադրութիւն հրաւիրելու Ինքիւբէյթըր կոչուած հրաշալի մի գիտի վրայ, որի շնորհիւ այսօր կարելի է քիչ ծախքով, բայց բաւական ջանքով և ուշադրութեամբ մեծ քանակութեամբ հաւի ճուտեր հայթայթել. օրինակի համար 100 կամ 200 և աւելի՝ 20 – 22 օրուայ միջոցին։ Շատ ցանկալի էր որ ձեռնարկող անհատներ կամ ուրիշ մի վաճառատուն ներմուծէին այդ մեքենան և դրա նման ուրիշ զանազան տեսակի օգտակար գործիքներ որով հնարաւոր կըլինէր օգտել տնտեսպէս միջին դասակարգին աւելի շահաւէտ և միանգամայն պատուաբեր գործերով զբաղուելու։ Տրապիզոնի Ամերիկեան հիւպատոսի տեղեկագրին համեմատ՝ Փոքր Ասիայում Ամերիկեան ինքիւբէյթըրներ մեծաքանակ գործածւում և մեծ արդիւնք ու բաւականութիւն են տալիս։ Բազաքիս Ամերիկեան հիւպատոսարանում պատկերազարդ Կաթալոգներ կան ինքիւբէյթըր մեքենաների, որոնցից կարելի է օգտուել հարկ եղած տեղեկութիւնները ձեռք բերելու համար։

Մ. Պ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Նոր Զուղա, 10 Ապրիլի

Սահակ առաջնորդի հեռանալու առիթով.

Վերջապէս Սահակ առաջնորդ Այվատեանը հեռացաւ Զուղայից, Էջմիածնի սինոդի նախագահ՝ Յուսիկ Արք. եպիսկոպոսը, Սմենայն Հայոց կաթողիկոսի հաստատման մասին ծանուցանող հեռագրի հետ միաժամանակ, յայտնում է Այվատեանին (անշուշտ Վեհափառի հրամանով) բռնել Էջմիածնի ճամպան։

Հեռագիրը ստանալիս յանկարծակի եկած առաջնորդը տատանւում է՝ ասելով «գնամ թէ չգնամ»։ Մթթէ...

Սակայն տեղի տալով Էջմիածնից կրկնուող հեռագրի առաջ, Այվատեան առաջնորդը երկու օր առաջ մեկնեց, տանելով իր հետ՝ իր փէշերից կախուած եղբօրը, Ամենափրկչեան վանքի ինքնակոչ վարպետապետի տնտես՝ Մկրտիչ աղային։

Սահակ առաջնորդի հեռանալով հազիւ ուզում էինք մի քիչ շունչ քաշել, երբ նորից սկսուեցին համիդական հանրագրութիւնները Նոր-Զուղայում։ Հեռացող առաջնորդի համախոհները դոնէ դուռ ընկած ստորագրութիւններ են հաւաքում և գովասանական թղթեր են գրում Կաթողիկոսին ուղարկելու համար, որպէսզի Սահակ առաջնորդին նորից Նոր-Զուղա ուղարկէ։

Ստորագրութիւնները հաւաքում են շատ խայտառակ ձևերով։ Ժողովրդի հասկացող մասը զզուանքով է վերաբերում այս ամօթալի ձեռնարկին և բողոքում է։ Գործը կատարւում է օրը ցերեկով և տեղի են ունենում գեղծումներ»[1])։

Բնական է զրկուել Այվատեանի նման «քաղաքագէտ» յորջորջուող առաջնորդից, այդ արդէն անփոխարինելի կորուստ էր նրա կամարիլլայի համար։ Այդ իսկ պատճառով գործել հարկաւոր էր։

Մի շիրաչիի և աւելի քան տգէտ մի տէրտէրացուի միջոցով հաւաքուող ստորագրութիւնները գեռ չլրացած, խփում են էջմիածին մի հեռագիր, խնդրելով Վեհափառից՝ «Սահակ առաջնորդին կոչելու որոշումը փոխէ, որովհետև Պարսկաստանի ներկայ տագնապից ժամանակում, նրա պէտքը զգալի է»։

Սպասում են մէկ, երկու երեք օր, բայց հեռագրի պատասխանն չկայ ու չը կայ։ Առաջնորդն էլ հեռանում է նախապէս վարձատրելով տէրտէրացուին չորս ատիճանով, ի տրիտուր նրա կատարած հաւատարիմ ծառայութեան։ Իսկ համախոհներն էլ մնում են փոս ու փոշման իրենց գուր կատարած «արջի ծառայութեան» համար (այդպէս էր որակել առաջնորդը)։

Այվատեան արք եպիսկոպոսը հեռանալով՝ չարեց փոխանորդի կարգադրութիւն, այլ գործերը յանձնեց առաջնորդական Խորհրդարանին։ Ամենափրկչեան Վանքի աւագ միաբան՝ Եղնիկ վարդապետը, որ ապրում էր վանքում և որին, մինչ այդ չէր ուզում Փերիա և Զարմահալ գաւառների հոգևոր հովութեան պաշտօնը կրկին տալ իր վրէժխնդրական յատուկ ոգով, չնչանակեց տեղակալ, այլ բաւականացաւ այժմեան պարագաներում վերահաստատել իր պաշտօնի մէջ։

Ցամենայն դէպս ուրախալի է, որ վերջապէս Սահակ առաջնորդը զգաց իր դէպի Եղնիկ վարդապետը յանիրաւի բռնած՝ ընթացքի մնասակարութիւնը, ըզգաց որ Եղնիկ վարդապետը, թէկուզ ըստորագրեալ-չի ընկճուի Այվատեանական կապրիզների տակ, և որ, թէ կուզ ինչքան դժուարութիւններ ու խոչընդոտներ լինին դիմաւորելու նրան, նա յանձն է առնում պաշտպանելու ճշմարտութիւնը իր «մահուան դատավճիռ» կարդացողների ոտնակոխումներից։

Ինչպէս յայտնի է, Նոր Զուղայի ժողովուրդը ի վաղուց հետէ թէ հեռագրով և թէ նամակով յայտնել է իր անվստահութիւնն ու բուռն դժգոհութիւնը Էջմիածնին, Սահակ առաջնորդի ընդհանրապէս բացասական գծերի պատճառով։ Այսօր ևս, երբ նա արդէն բարձ բագոյն իշխանութեան կողմից կոչուած է, բարձրանում են նրա եռևից, յանուն Վեհափառ կաթողիկոսի բողոքի ձայներ, որպէս զի այլևս չվերադարձնէ Նոր-Զուղա, որովհետև նրա ներկայութիւնը այս թեմում ոչ միայն այլևս օգտակար չի լինի (ինչպէս որ չէ եղել այլ կուսենայ վնասակար հետևանքներ անցեալում ևս)։

Պարսկա-Հնդկաստանի թեմը այժմ կարօտ է գործունեայ, հեռատես և լրջմիտ մի առաջնորդի։ Բաւական էր ինչքան Այվատեան ապիկար առաջնորդը կոթնեց այդ պատասխանատու թեմին, կազմելով անփառունակ էջեր նրա տարեգրութեան մէջ։ Շատ առաջնորդներ են յաջորդել այս թեմում, բայց և՛ ոչ մէկը տգրուկի պէս, à la Այվատեան, չէ կպել ժողովրդից։ Ժամանակն է անսալ ժողովրդի հզօր ձայնին, որը պահանջում է Այվատեանի ընդ միշտ հեռացումը։

Սիրում ենք յուսալ որ նորընտիր վեհափառ կաթողիկոսը անտես չի առնի Էջմիածնի դիւանատան արխիւից աղաղակող բողոքները և հեռացնելով մեզանից Այվատեան առաջնորդին, կտայ մեզ մի արժանաւոր յաջորդ, որ ընդունակ լինի բարձրացնելու առաջնորդարանի պրեստիժը, որի հետ այնքան չարաչար կերպով վարուեց քամելիոնի պէս գոյներ ընդունող Սահակ առաջնորդ Այվատեանը։

Նոր Զուղայեցի

[1]) Տես «Առաւօտ» № 22

28 Ապրիլ Թէհրան

Համադանի և Քիրմանշահի կողմերում Սալարէ Դովլի սկսած արշաւանքները զսպելու համար՝ այստեղից ուղարկուեց 2500 Հոգուց բաղկացած մի բանակ երեք ուղղութեամբ։ Մէկը Ղազվինի, երկրորդը Համադանի ճանապարհով, իսկ երրորդը՝ Արադի վրայով։ Այս կարևոր ձեռնարկի մէջ Եփրեմին միայնակ թողնելու համար տեղիս Հ. Յ. Դ. Կոմիտեն մասնաւոր թռուցիկով արգելեց Դաշնակցական զինուորներին Սալար Դովլի դէմ գը նալու։

Այս կոչի հետևանքն եղաւ այն, որ նոյնիսկ Դաշնակցութիւնից հրաժարուած Բեռու խմբից մեծ թուով հայ զինուորներ վերադարձան Թէհրան, նորա մօտ թողնելով միքանի հոգի կուշկակարի աշակերտներ, խոհարարներ, անփորձներ, և պատերազմական գործերին բոլորովին անծանօթ անձնաւորութիւններ։

Փարման Ֆարմայի յաղթուելը Համադանի մօտերքում՝ մեծ իրարանցում առաջացրեց Թէհրանում, ուր որոշուեց որ Եփրեմն անմիջապէս Համադան կառավարական բանակը դեկավարելու համար։ Այս նպատակով Եփրեմը ապրիլ 24-ին մեկնեց, բայց այս անգամ, գրեթէ, միայնակ, որովհետև նախկին նշանաւոր կուսակցները հեռանալով նորանից, նորան թողեցին մի քանի վարձկաններով, որոնց յաջողութեան վրայ մեծ կասկած կայ ան այժմ։ Կասկած կայ նաև Եփրեմի այս անգամուան յաջողութեան վրայ։

Այս բոլոր իրարանցման ժամանակ զարմանալի պազարիւն հանդիսատեսի դերի մէջ է մտել Անգլօ-Ռուսական համաձայնութիւնը։ Կարծւում է թէ այս անտարբերութիւնը կտևի մինչև այն ժամանակ, որ կառավարութիւնը նեղն ընկած՝ պաշտօնապէս կդիմէ նրանց և կը խնդրէ նորա գինուած միջամտութիւնը...

Ս. Փայլակ

28 Ապրիլ Մարաղա

Մարաղի հին խարխլած պարսպի վերանորոգութիւնը, որ առ ժամանակ դադարեցուած էր. նորէն սկսուել է։ Բանում են 100 աւար բանւորներ։ Այս գործի համար Շօջայի Դովլէն ուղարկել էր 3000 թուման, իսկ քաղաքացիներից էլ եռանդով գանձւում է բաւական դրամ ըստ կարողութեան։

Հայերն այստեղից լաւ պրծան։ Հայերից ուզում էին 500 թուման։ Հոգաբարձու պ. Իվանը իջեցրել էր 300 թմնի. և մամուռ էր գրուած, որ այդ դրամը հաւաքուի։ Բայց տեղւոյս վաճառականապետ պ. Զ. Մելիք Ազարեանը այդ գումարն իջեցրեց 100 թմնի.։ Այդ գրամն ուղարկեց դատաւորին և յայտնեց, որ դրանից աւելի հայերը չեն կարող տալ. իսկ մամուռներն էլ աւելորդ են հայոց թաղում։

Հայոց թաղով անցնող ջուրը յաճախ կտրում են թուրքերը և այրում հայոց տան ծառերն ու մարգերը։ Պ. Մելիք Ազարեանն այդ հարցն էլ կարգադրել է յօգուտ հայերի։

Ցոմսակների վաճառման խնդրում պ. Իվանը բաւական աշխատեց, բայց մեր գաւակների տէրերը արձագանք չտուին պարոնի ջանքերին։ Մեր ժողովուրդը ուզում է որ իր գաւակները կարդան, միայն թէ իրենք կոպէկ չտան։ Կարծում են որ ազգը կամ ընտրուած հոգաբարձուները պարտաւոր են նրանց ձրի կարդացնել։ Քաղաքացիք բնաւ չեն մտածում իրենցից ընտրուած հոգաբարձուներին օգնել. չեն մտածում իրենց գրադարանի. դպրոցի և անշուք եկեղեցու մասին։ Վերջինս բոլորովին խաւար է և երգող չկայ։

Ձեր թերթում ապրդած էր մի սխալ։ Դերասանուհիներից մէկը ոչ թէ օր. Նոյեմզարն էր, այլ տիկին Նոյեմզարը։

Միւս դերասաններն էլ լաւ խաղացին իրենց դերերը:

Տեղացի

---

30 Ապրիլ Միանդաբ

Միանդաբում միակ Հարուստը պ. Աւագն է, որ այս շրջանում յայտնի է Խօջա Աւագ անունով: Սա մերձիմահ հիւանդ լինելով՝ Թաւրիզից կանչել է իւր քրոջ որդի Միրզա Մելիք Սայեադխանեանին, որ սովորել է Թաւրիզի բողոքականաց դպրոցում և դարձել բողոքական: Մենք ընդգծում ենք վերջին բառը, որովհետև նրա բողոքական լինելը, ոպէս կտեսնենք, իրեն թշնամի-հակառակորդ է դարձրել իւր մայրենի, ծնող եկեղեցու դէմ:

Պ. Աւագը 1000 թմն. կտակել է յիշեալ Միրզին որին և կարգել է վաքիլ, որ իր մահուանից յետ զանձ է իւր ապառիկները և մաս հանէ հետևեալներին:

250 թմն. կտակել է իւր կաթնակեր աղջկան. եկեղեցուն և դպրոցին էլ՝ 50-ական թմն.:

Որքան մենք իմացանք, վաքիլ պ Միրզան հիւանդին մտափոխ է անել տուել, որ եկեղեցուն և դպրոցին բան չտայ: Ահա մեր «կրթուած» և օտարադաւան դարձածներից մէկը,[1] որ հակառակում է ազգային հաստատութեանց փող տալ: Ցանկալի էր ազգային իշխանութիւնը հետամուտ լինէր այս բանին:

Ծամբորդ

---

4 Մայիս Սավուջբուլաղ

Չիլիգ գիւղը, որ պատկանում է Նազգա-Իմամ-Կուլի Միրզին, ինչոր առուի խնդիր ունի իր դրացի գիւղերից մէկի հետ: Այդ խնդրի առթիւ Սարդարը Մուքրին, որը այստեղի դատաւորն է, երկու ձիաւոր էր ուղարկել այդ գործի քննութեան համար: Չիլիգի քօխան այդ քննիչ մամուրների հետ ընդհարուելով՝ մէկի ձին սպանում է: Այս լուրը Սարդար Մուքրին լսելով՝ հաւաքում է մեծ քանակութեամբ զօրք և յայտնում է իրենց ցեղին՝ բէգզադաներին, որ բոլորը պատրաստուեն Չիլիգը թալանելու և աւերելու համար:

Խօսւում է որ Նազգա-Իմամ-Կուլի Միրզան էլ մեծ պատրաստութեան վրայ է. սպասւում է մեծ արիւնահեղութիւն:

Սիրու Աբեղեան

ԼՈՒՐԵՐ

ԹԱՒՐԻԶ

◆ Մայիս 8-ի առաւօտեան ամեն տեղ տարածուած էր Պարսկաստանի ժանդարմերիայի շէֆ և Նորա նոր պետական կազմի ամուր հեցուկ Եփրեմի պատերազմի դաշտում (Համադանի մօտ) խփուելու և վախճանուելու գոյժը:

◆ Եփրեմի մահուան առթիւ Լիլաւի Հայկազեան-Թամարեան և Գեղրոնական դպրոցների վարչութիւնները դադարեցրել էին դասերը, փակելով դպրոցները ամսի 8 ին:

◆ Դեկտեմբերեան դէպքերին ռուս վիրաւոր զինուորներին ապաստան և խնամք ցոյց տուած լինելու համար՝ ռուսական շքանշանով պարգևատրուել են տեղիս կաթոլիկ միսսիայի անդամներից 7 հոգի. 3 հոգի Սան Վէն Սան ուխտից և 4 հոգի էլ՝ Սաքրէ Քէօր միաբանութիւնից:

◆ «Մշակ»-ի 40 ամեայ յոբելեանի տեղական յանձնախումբը պատեհ հանգանակել է 425 րուբլի:

◆ Յ. Յովհաննիսեանի յոբելեանական յանձնաժողովի կողմից թեմակալը դիմել է կենդրոնական դպրոցի հոգաբարձութեան որ պարահէլը տրամադրին գրօսանքի համար: Պատասխանը դրական մուքովհի ըստացուել:

◆ Անգարդպյին խնդիրը չափազանց դժուարացել է և ռուսական սահմանում ձեռք են առնուել շատ խիստ միջոցներ և զգուշութիւններ: Նոքա, որոնք շարունակ Ջուլֆում են մնում և պէտք է ամեն օր երթևեկեն սահմանը, այլ և չեն օգտուում նախկին ազատութիւններով: Անցագրերի քննութիւնը մաքսատնից վերցուել և յանձնուել է ժանդարմական կողմին: Երթևեկողներից պահանջւում է, որ նոքա ունենան իրենց լուսանկարը:

◆ Մի շաբաթ է, որ կեդրոնական Զ. դատարանի սաները, հակառակ մանկավարժական ժողովի կարգադրութեան. չեն գալիս քննութեան: Գործի մանրամասնութիւնները մեզ պակասում են. բայց յամենայն դէպս սաների արժանապատուութիւնն ու օգուտը պահանջում է յարգանքով ընդառաջել մանկ. ժողովի հրահանգին, այն հասկանալի պատճառով որ ժողովը իրաւ սառել ձեռնհաս մի մարմին առաւել համգամանօրէն նայած կլինի այդ գործին և որոշում կայացրած, քան այդ կարող են անել սաները:

◆ Մեզ գրում են. Օսմանեան փաճառականական սենեակի տարեկան ընդհ. ժողովը անցեալ կիրակի օր, Ապրիլ 29 ին տեղի ունեցաւ ընդհ. նախագահութեամբ Ն. Վսեմ. գեներալ հիւպատոս Էնվէր Պէյի: Ֆրանսերէն և Թուրքերէն լեզուով կարդացուած տեղեկագրից յայտնուեց, որ այդ նորահաստատ Ժամբը 77 անդամներ է ունեցել անցեալ տարին, վարչութեան գեր Առենապետ՝ ընտրուեց քուէից առաւելութեամբ պ Վռամ Փիլոսեան, որպէս Ա. Ատենապետ՝ Վլադիգա էֆէնդին իր ձառում յայտարարեց շուտով մի ամսեայ թերթ պէտք է տպագրուի Ժամբի կողմից Ֆրանս. հայեր. և պարսկ. լեզուներով և ամեն ջանք պիտի անուի Թիւրքիոյ և Պարսկաստանի փաճառականական յարաբերութիւնները զիւրացնելու և առևտրական ձեռնարկներին զարկ տալու:

Օսմանեան Ժամբը գը Քօմերը հըրաւէր կարգաց հասարակութեան ուշադրութիւնը ընծայել այս գործին և մասնակցութիւն ունենալ: Ամեն կիրակի առաւօտ. ժամ 10—12 իւր բիւրօյում, որ գտնւում է Հաջի Սէյիդ Հիւսէյին Միանէ քարվանսէրայում—պատրաստ է փաճառ.—գործերի վերահասութիւն տալ.

Ներկայ տարուայ պաշտօնակատարներն են.

Պ. Վլադիգա Ա. Ատենապետ

„ Վռամ Փիլոսեան Բ. „

„ Յովհաննէս Տ. Թովմասեան՝ քարտուղար և գանձապահ

„ Ստեփան Մովսիսեան՝ դրագիր

„ Գէորգ Չիլինկիրեան՝ խորհրդական

„ Միհրան Պաղդասարեան՝ „

Աղա Միր Մէօհսին՝ Թաջիրբաշի

Ստացուած հրատարակութիւններ

1. «Հանդէս Ամսօրեայ» 1912 թ. № 5 (Մայիս) ԻԶ տարի:

2. «Կոհակ» № 14 (89), 15 (90),

3. «Դայլայլիկ». Պատկերազարդ և ձայնագրուած լիակատար երգարան. կազմեց Հմայեակ Արամեանց (Մ. Տ. Շեմո). տպագրութիւն Տ. Տօղրամաճեան. Հրատարակութիւն «Կոհակ»-ի. հասցէ, 125 B. P. Centrale, Constantinople. գինն է անկազմ՝ 1 րուբլի փառակազմ՝ 1—40: Դայլայլիկի թէ տպագրութիւնը, և թէ նըկարները շատ աւելի յաջող են և անհամեմատ գեղարուեստական քան „Հայոց Երգարաններ“: Յուսով ենք միւս հատորներն առաւել գեղարուեստական կլինեն, իսկ երգերն էլ աւելի հատընտիր:

4. «Հովիտ» № № 14, 15 և 16:

ԱՏՐՊԱՏԱԿԱՆ

Սավուջ-Բուլաղ

Մայիս 7 թուով մեր սեփական թըղթակիցը յայտնում է.

Չիլիգ գիւղի խնդրի առթիւ երկու գիւղատէրերը՝ Սամսամը և Նազգա Իմամ Կուլի Միրզան ընդհարուել են: Առում են որ շատ սպանուածներ կան:

Նոյն տեղից. Թաւրիզի աքցիզ. կառավարչի կարգադրութեամբ՝ տեղիս մաքսատան կառավարիչը հաշիւ պահանջից ակցիզի բէիսից իր գործունէութեան համար: Վերջինս չկարողանալով յրիւ հաշիւ տալ Մաքսատան կառավարչի հրամանով երեք չորս օր առաջ բանդարկուեցաւ դատարանում.

ԱԶԳԱՅԻՆ

Հայազգի Գրիգոր Եղիայեան 1911 թ. Յունիս 10-ին Թիֆլիսում մեռնելով 78 տարեկան հասակում, թողել է մի մեծագումար կտակ ի նպաստ Դոհիրէյի Ազգային Աւագնորդարանին, կտակակատար նշանակելով Վսեմ. Պօղոս Փաշա Նուպարը: Ազգին կտակած գումարը, մօտ 50000 եգիպտական ոսկի՝ յատկացուած է մասնաւորապէս մի եկեղեցու շինութեան և Գոյլուաեան վարժարանի ինպատ՝ ուսանողական կուլաբրու հաստատութեան (առանց զաւանանքի խտրութեան).

Խմբագիր – հրատարակիչ՝

Ռ. Տ. Վարդանեանց

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„МАГАЗИНЪ ПАРИЖЪ“

Propriétaire J. D. Thomassian

ՓԱՐԻԶ ՄԱԳԱԶԻՆ

ԿԱՆԱՑԻ ՆՈՐ ԲԼՈՒԶՆԵՐ

ՇԱԼԵՐ

ԵՒ ՆՈՐ ԿՏՈՐՆԵՐ

Նոյնպէս տերմօսներ, որոնք տաք կամ սառը ջուրը 24 ժամ տեմպերատուրում պահելու յատկութիւն ունին

ՇՏԱՊԵՑԷ՛Ք ՕԳՏՈՒԵԼ ԱՌԻԹԻՑ

Գ Ա Ր Ո Ւ Ն

(ՄԱԳԱԶԻՆ ՄԻՍԱԿ ԲԺՇԿԵԱՆԻ)

Նոր ստացել են ՄԵՏԱՔՍԵԱՅ ԸՆՏԻՐ ԲԼՈՒԶԱՑՈՒՆԵՐ, ՍՊԻՏԱԿ ԼԱՒ ՔԱԹԱՆՆԵՐ, տղամարդկանց ԿՕՇԻԿ ԳԼԽԱՐԿՆԵՐ, ԵՐԿԱՐ ՏԱԿ ՎԱՐՏԻՔՆԵՐ, ճաշակաւոր ԳՈԼՍՏՈՒԿՆԵՐ, անձեռոցիկներ, երեխաների գլխարկներ և զանազան տեսակի հետաքրքիր խաղալիքներ:

Ընդունելով ԵՂԲԱՐՔ ՄԷՅԼԱՆՈՎՆԵՐԻ ՌՈՒՍԻՏՐԱԿԱՆ ՏԱՆ ներկայացուցչութիւնը, պատիւ ունիմ յայտարարելու ի գիտութիւն սպառողների, որ ընդունում եմ նոյն ֆիրմայի պատրաստի պապիրոսների և ծխախոտների պատւէրներ: Պատւէրները կարելի է տալ 50000 հատից սկսած. իբրև կանխավճար վերցնում ենք 100 ին 15 %. գները հաշւում ենք գործարանի հաշւով, ցանկացողները կարող են վերցնել պրէյսկուրանտները:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Քաջամարտիկ Եփրեմի սպանութիւնը, ըստ հեռագրական լուրի, եղել է արդիւնք իւր յանդուգն խիզախութեան և նախայարձակ լինելուն: Լսում ենք չահեանւած շուքով քաջի դիակը մայուել է քաղաք: Մինիստրները ընդառաջ են եկել: Լսւում է, որ կանգնեցնելու են նահատակի արձանը Թեհրանէ Մեջլիսում: Դիակն ամփոփուել է Հասանաբադի հայոց դպրոցի բակում:

◆ Քէյվանցոց ձգձգուած և առաւել խճճուած գործի հարթումը, տաւջնորդարանից յանձնուած է փաճառականապետ պ. Զ. Նազարբէգեանին, որ հաճի վրահասու լինել գժբախտների դատին: Այդ դէպքում յուսալի է, որ գիւղացիք բաւարարուեն, որովհետև պ. Նազարբէգեանի բազմափորձութիւնն ու գիրքը արդէն երաշխիք են դատի տարման:

◆ Յ. Յովհաննիսեանի յոբ. հանդէսը տեղի կունենայ Մայիս 17-ին Արամ. դպրոցի թատերասրահում:

---

[1] Չէք լսել, որ առածն ասում է հայի թուրքացածը աւելի ֆանատիկ կլինի, կամ գինու քացախը՝ աւելի թունդ:

Ծ. խ.